

ՊԱՅՄԱՆՔ
ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . . 12 Ֆր.

Վեցամսեայ . . . 6 Ֆր.

ԱՐՏԱՍՈՒՄԱՆ

Երկու քիւ մկի ծարով

Տարեկան . . . 14 Ֆր.


Վեցամսեայ . . . 7 Ֆր.

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60
Վեցամսեայ 1.50 Տոյար »

ԿԱՆԻՒԿ

Ծանոցման սողը
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱՏ

ՀԱՍՑԷ

Rédaction du journal

le vounk

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

Игравунк

ВАРНА

Գրոցրոցիւնք եւս չեմ
տրոցիր

ԹԱՏԵՐԱԲԵՍԸ

Որչափ որ հայ ցեղը ներկայիս տխուր դարաշրջան մը բոլորելու և այդ տխուր ժամանակ օրերուն մէջ ինքնապաշտպանութեան համար, միայն իր միտքը յօդնեցնելու և իր բազմակիցը զօրացնելու անխուսափելի հարկին մէջ կը գտնուի, սակայն չէ գաղաթմ նաեւ գէթ անհատական ձեռնարկութիւններով իր ցեղային ընդունակութիւնները ի հանդէս բերել այլ և այլ ազգաբնակչութեան վրայ, էտկար ճանչնալ մը, Ա. Շապանեան մը նկարագրութեան, Մազսուտեան մը ողբերգութեան ճիւղերուն մէջ և դեռ ուրիշներ հայ ցեղին ընդունակութեան և հանձարեղութեան հոյակապ ապացոյցները կուտան եւրոպական ոստաններու մէջ և օտար մամուլէն այնպիսի գրուածքներ կը խլեն որ երբեք խլած ըլլան Արեւելքի մէջ մեզ վիճակակից ու և ցեղի մը անդամները:

Գեղարուեստի ճիւղերուն մէջ մեզ համար և մեր այս ճգնաժամային օրերուն մէջ էն նըպատակաւոր մարը բեմական արուեստն է անշուշտ և այդ ճիւղը մշակելու և իր տաղանդաւորները քաջալերելու պարտականութեան մէջ պէտք չէ որ թերանար հայ հասարակութիւնը: Կովկասէն հասնող տեղեկութիւնները Պաղուկի կոտորածին մանրամասնութեանց հետ մեզ կը բերեն հռչակաւոր դերասանուհի Տիկին Սիրանուշի բեմական գործունէութեան երեսնամեակը տօնելու պատրաստութեան լուրերն ալ: Ողբացեալ Ազամեանէ վերջ կովկասի մէջ հայ թատերաբեմը իր բարձրութեան վրայ պահող այդ տաղանդաւոր արուեստաւորուհին Պաղարահայոցս համար ևս վաղածանօթ գէմք մըն է:

Տարիներու երկուտասնեակ մը հազիւ բոլորած ենք այն օրերէն ի վեր, յորում Տիկին Սիրանուշի իր հետ ունենալով հանգուցեալ Ծառուկիանը և Դրեանը

յը, եկած էր Պաղարահայ հայաշատ քաղաքներուն մէջ հայ բեմը փայլեցնելու և տեղացի օտարազգիներուն իսկ գաղափար մը տալ թէ հայ թատերաբեմը ինչ բարձրութեան վրայ կը գտնուի: Ո՞ր հայը իր գրացի Պաղարահայ և Յոյնի պարծանքով մը մատնանի չէր ընել իր մէջ գտնուող հայ թատերաբեմի այդ փայլուն աստղերը, մանաւանդ Տիկին Սիրանուշի: Այո՛, ամէնքս ալ իրմով կը պարծենայինք այդ օրերուն մէջ, բայց մեր մէջէն շատ քիչերը գտնուեցան որ այդ տաղանդաւոր դերասանուհին գտնէ անօթի չը մեղցուցած չղբեմաւ գնելու խնամքը ունեցան: Եւ այդ ուրիշ բանի չէինք վերագրել, բայց եթէ ասկէ տասնեակ մը տարիներ առաջ, պաղարահայոս թատրոնը և իր դերը տակաւին լաւ ըմբռնած չըլլալուն:

Իսկ հիմալ որ անկէ ի վեր այնչափ տարիներ յաւորեցան և այդ տարիներու մէջ հայ դերասանական խումբեր սնուցինք և պահեցինք մեր մօտ, արդեօք Պաղարահայերս մեր մէջ չենք զգար երախտագիտական զգացում մը հանդէպ այդ մեծ արուեստաւորուհիին, որուն մեր մտքերուն վրայ թողած տպաւորութիւնը տակաւին չատերս չենք դադարած յիշել: Եթէ թերացանք արժանաւոր ընծայ մը շրջակելու: Տիկին Սիրանուշի Յոյնեանին առթիւ, գէթ խնամքը ունենանք շնորհաւորական ուղերձ մը հասցնելու անոր, ի՞նչ կը մտածեն մեր թատերասերները և ի՞նչ կընեն յանուն դերասանական արուեստին մեր մէջ ապրող Պաղարահայ, Պէնիւնի խմբապետները և ուրիշներ:

Ըսինք թէ բեմական արուեստը Գեղարուեստի ճիւղերուն մէջ մեր ներկայ տխուր օրերուն էն նպատակաւոր մարնէ: Մեր մտքերը զարգացնելու մեր սրտերը վառելու, մեր բազմակիցը ինք

նապաշտպանութեան պատրաստելու և վերջապէս ներկայ վրտանգալից կացութենէն ճողոպրուելու համար ամենակարեւոր դպրոցն է թատերաբեմը, պայմանաւ որ դիտանք զայն իր գերի բարձրութեան վրայ պահել:

Վերջին տարիներուս իրօք թատերասիրական հակում մը կը տեսնուի Պաղարահայոցս մէջ, մէկէ, երկուքէ աւելի հայ դերասանական խումբեր քաջաքէ քաջաք կ'երթեկեն և ուր որ կերթան սրահները հայ բազմութեամբ լեցուն կը գտնենք: Բայց խնդիր է գիտնալ թէ այդ յաճախած թատրոնները իրենց բարոյական բարձր կոչումին վրայ են:

Ես ձեռքս խղճիս վրայ դնելով կը պատասխանեմ թէ ՈՉ: Որովհետեւ մօտէն տեսած եմ թէ հոս, Պաղարահայ մէջ, դերասանութեան անձնատուր եղողներ միմիայն ապրուստի խանութ մը նկատած են բեմը: Իսկ թատերասերներ շատ չատ բարեգործական հաստատութիւն մը նկատած են թատրոնը: Ուրիշներ լոկ զուարճութեան վայր մը համարած են զայն:

Բայց այդ չէ թատրոնին դերը մանաւանդ մեզ նման, մեր վիճակը ունեցող ժողովուրդի մը համար: Իպիչական խաղերը, երգչուհիներու կիսամերկ իրաններու ցուցադրումը, հակաբնական և անիմաստ զանաշարներու ողբալիօրէն գունհիկ տեսարանները, թատրոնը իր նուիրական բարձրութենէն ձգած են վար, շատ վար մինչև օրսայիսի ի և Գաղափարի գետնաքար ժակարդակին վրայ:

Մենք ստէպ առիթը ունեցած ենք Պաղարահայ մէջ գտնուող մեր դերասաններուն մատնանի ընելու այս անկումը, խորհուրդ տալու իրենց որ բաժանուած ուժերին միացնեն և փոխանակ քանի մը թերի և շատ թերի խումբեր կազմելու, հաւաքուին, համախմբուին Պ. Պաղարահայի հետ Պէնիւնի, Շաւարշի, Յալուրեանի և ուրիշ մէկ քանիներ,

որոնք այսօր չորս խումբերու բաժնուած հայ թատերաբեմը ծաղր ու ծանակ կընեն և իրենց ալ նիւթական և բարոյական անկումը կը փութացնեն: Ի՞նչ մը ինքնագիտակցութիւն և քիչ մըն ալ խղճամտութիւն թող ունենան անոնք, որ փրկեն թէ՛ ինքզինքնին և թէ՛ պաղարահայ թատերաբեմը: Երբեք տեղ ժողովուրդը արգէն սկսած է թատերասեր ըլլալ և պատրաստ է քաջալերելու չէնքով շնորհքով կազմուած հայ խումբ մը:

ԲԱՂՈՒՍԺՔ

Տ. Արշակ Զօպանեան իր Անահիտ հանգէսի վերջին թիւին կցած ըլլալով ՀՈՐԻՉՈՒՆ ը խորագրով քաղաքական յօդուած մը կը խօսի Ռուսո-ճարտական պատերազմին, պետութեանց բռնած դիրքին, Մակեդոնական խնդրոյն, Արաբական շարժումին, Սասնոյ շարքին մէջ Դրօշակեան պատասխանատուութեան մասին, եւ գալով Վեհ. Կաթողիկոսին պետութեանց շրջած պատգամաւորութեան, օտ տողերը կը գրէ:

Եւրոպական պետութեանց մեր դատին հանդէպ այս պահուս ունեցած վատեցուցիչ արաւագրութեանց մէկ նոր ապացոյցն ալ ունեցանք կաթողիկոսական պատգամաւորութեան ձախդումին մէջ: Պ. Լուպէ եւ Պ. Տէլքասէ ընդունեցան պատուիրակութիւնը, բայց քանի մը օր յետոյ Պ. Լուպէ Սուլթանին իր նուէրը դրկեց հինգ հատ հոյակապ ձի: Ինչպիսի թագաւորը չընդունեցաւ պատգամաւորութիւնը, Պ. Լանստաուն ընդունեցաւ զայն, բայց քիչ յետոյ անգլիական ծովակալ մը իր նաւերով հանդիսաւորապէս գնաց Պոլիս: Սուլթանը քարեկամօրէն ողջունել . . . Միայն Միացեալ Նահանգաց նախագահն է որ անխառնօրէն համակրական ընդունելութիւն մ'ըրաւ Հայոց Հայրապետին ներկայացուցիչներուն: Պատգամաւորութիւնը անգամ մը եւս ջանալով ընդունուի Անգլիոյ թագաւորէն եւ չյաջողելով յուսահատեցաւ, եւ միւս փնտալեաններուն ներկայանալու այլ եւս

փորձ իսկ չըբաւ :
Ճիշդ է որ պատգամաւորութիւնը ինքն ալ իր թաքթիքի սը-
խախտումով նպաստեց այս ձախո-
ղումին՝ զոր կարելի չէ միմիայն
արտաքին աննպաստ պայմաններու
վերագրել : Հայրապետը հրամայած էր
որ այդ պատյուր սկսելէ առաջ,
ձեռնհաս եւ փորձառու անձնաւոր-
ութեանց խորհրդաժողով մը գու-
մարուի, (յիշած էր նոյն իսկ մէկ
քանի անուններ հայ դիւանագէտ-
ներու) : Պատգամաւորութեան չը
կատարեց Հայրապետին այդ շատ
խելացի որոշումը () : Պ. Լորիս Մե-
լիքեան պատգամաւորութեան ըն-
կերացաւ իբր անդամ, իբր պաշ-
տօնական ներկայացուցիչ Հայրա-
պետին քաղաքական որոշ կու-
սակցութեան մը պատկանող «Փրօ
Արմէնիայի» վարչութեան հրապա-
րական մասնակցող գործիչ մը
պէտք չէր որ ներկայանար իբր
պատուիրակ Հայոց Հայրապետին :
Պ. Լորիս Մելիքեանի նման գոր-
ծիչներ պէտք էր որ քուլիսի մէջ
այնպէս լինէ պատգամաւորութեան
գիմուսները յաջողցնելու : պաշա-
տական պատգամաւորութեան պէտք
էր զուտ կրօնական-ազգային ըլլար :
պէտք չէր Հայոց Հայրապետը ո եւ
է կուսակցութեան մը կապուած
ցոյց տալ : արդ, Պոսթոնի «Հոյի-
նիք»ը նոյն իսկ հրատարակեց վեր-
ջերս նամակ մը ուղղուած Հայ-
րապետին առ Պ. Մելիքեանի : այդ
նամակին հրատարակութեանը ան-
ներկի արարք մըն է : Հայոց եւ-
կեղեցւոյն Գեորգիոյն Պետին կողմէ
ղրկուած երկու եպիսկոպոսներ ե-
թէ միայնակ ներկայացած ըլլային,
անշուշտ Վրդուեալին եւրպայի
բոլոր վեհապետներէն, կամ գէթ
արտաքին գործոց նախարարներէն—
ինչ որ բաւական է եւ էական է :
Պատգամաւորութեանը ուրիշ սխալ
մըն ալ գործեց, այն է առջի օրէն
լրագիրներու մէջ մեծաշինդ ծա-
նուցանել իր դիւանագիտական պըտոյ-
տը () : Սուլթանը ժամանակէն առաջ
իմանալով ամէն բան, իր բոլոր
ազդեցութիւնը բանեցուց պատգա-
մաւորութեան առջեւ խոչնդոտներ
հանելու, եւ մեծ մասամբ յաջողե-
ցաւ :

Գրադէտ-յողուածագիրը Պա-
գուի կոտորածին եւ անոր յա-
ջորդող հաշտութեան մասին
խօսելով, կը գրուատէ հոն հայ
յեզուիտականաց ընթացքը ու
հայ ե իսլամ հոգեւորականու-
թեան ի յայտ բերած եղբայ-
րական զգացումները եւ ցոյ-
ցերը ընդդէմ կառավարական
էնթրիքներուն : իսկ այդ առ-
թիւ հայ յեզուի. կուսակցու-
թեանց հետեւեալ տողերը

(*) Որովհետեւ ինքնահաւան Դաշ-
նակցականները տարհամոզեցին եր-
կու արքեպիսկոպոսները որպէսզի
միայն իրենց մարդը հետ առնուէր եւ
փառքը միմիայն իրենց ըլլայ :
Մ. Խ.

(**) Դաշնակցականներու փողա-
հարութեան թաքթիքն էր որ այդ ընել
տուաւ, որպէս զի ատով տարտամ
յոյս մը ներշնչուի ժողովուրդին եւ
պահ մը մոռցուի Սասնոյ կոտո-
րածի մասին իրենց անեղ պատաս-
խանատուութիւնը :

Մ. Խ.

կողմէ. համեմաշխ գործունէու-
թեան համար : գովելի գաղա-
փար մը զոր մենք կը պաշ-
տենք եւ որ այս սիւնակներու
մէջ բաղմիջս յայտնուած է :

Երբ մահմետականներ եւ Հայեր
ըմբռնելով իրենց շահերու նոյնու-
թիւնը՝ հանդէպ հասարակաց բըռ-
նաւորին, կը մոռնան իրենց վէճե-
րը, մինչեւ իսկ իրենց միջեւ
թափուած արիւնը, եւ իրարու
ձեռք կուտան, ցաւալի չէ՞ տեսնել
որ մեր յեղափոխական կուսակ-
ցութիւնները կը շարունակեն միշտ
իբր ատել ու հալածել : Ո՞րքան
գեղեցիկ, որքան ազգօրոյտ բան
մը ըրած կըլլային թե՛ք, նկատի
ունենալով արդի քարդ եւ մութ
պայմանները, եւ մօտաւոր ապա-
կայի մէջ երեւան գալիք այլազան
պատահականութիւնները, երեք կու-
սակցութեանց իրազօր ներկայա-
ցուցիչներ՝ եւրոպական մայրաքա-
ղաքի մը մէջ համաժողով մը գու-
մարէին : Եթէ կան տարրեր որ
չեն ուզեր երեք կուսակցութեանց
ձուլումը,—զոր առաջարկեց Վեր.
Հնչակ. կուսակցութիւնը,—գէթ երեք
կուսակցութիւնները կրնան համա-
ձայնիլ ազգային զործունէութեան
ընդհանուր ծրագրի մը վրայ, բաժ-
նել իրենց մէջ գործունէութեան
այն մասերը որոնց աւելի յարուս-
եւ ընդունակութիւն ունի իրենցմէ
իւրաքանչիւրը, որոշել այժմէն այն
թաքթիքը զոր պէտք է ունենայ
Հայութիւնը՝ կարեւոր պատահա-
կանութիւններուն մէջ որոնք հո-
րիզոնին վրայ են : Լաւագոյն է
որ իւրաքանչիւր կուսակցութիւն
ընտրէ իբր իրազօր աշխարհի անձ-
նաւորութիւններ որ անձնական ո
եւ է վէճ չեն ունեցած իրարու
հետ : Այդպիսի անձնաւորութեանց
հաւաքում մը սիրալիր միջնորոյտ
մը կրնայ ստեղծել որ կը տա-
րածուի յետոյ կուսակցութեանց
բոլոր անդամներուն մէջ, կրնայ
վճռել կարգ մը էական հարցեր,
վերջ դնել մեր այս ըստ բաղդի
մութի մէջ՝ անդեկ՝ կոհակէ կոհակ
զարնուելով գացող նաւու խեղ-
ճուկ ու վտանգալից կացութիւնը,
եռանդ ու հաւատք ներշնչել ամ-
բողջ Հայութեան, մեր վարկը բար-
ձրացնել յայն օտարներուն ու մեզ
իրապէս ուժեղ դարձնել մեր
թշնամիներուն հանդէպ :

Թ Ղ Թ Ա Վ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԿԱԼՈՅ, 24 Մարտ 1904

Տեղւոյս Հոգաբարձութեան եռամեայ
շրջանը լրացած ըլլալով, ըստ տրա-
մադրութեան ներքին կանոնագրի 7-րդ
ընտրութիւն կատարուեցաւ ընդ հրա-
կոգութեամբ քաղաքապետութեան պա-
տուիրակին եւ ներկայից գաղտնի
քուէից միաձայնութեամբ ընտրուեցան՝
Տեառք Յովակիմ Գ. Ապուրել, Բար-
սեղ Հալաշեան, Յովհաննէս Գ. Իվանո-
վիչ, Յովհաննէս Սըրմալըյըզ եւ Յա-
րութիւն Շալեան (Պոլսեցի) : Նշանա-
կելի պարագայն այն է որ ընտրու-
թեան մասնակցեցան անխտիր տեղացի
եւ գաղթական, սակայն ցաւալի է որ
հինգ անդամոց միայն վերջինը հա-
յերէն գիտէ :

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Ս Ը

Լիզուները նորէն բացուեցան, չմո-
րումի եւ յուսահատութեան մի քանի
շարաթ ապրելէ յետոյ Ռուս լրագիր-
ները, որ հարուածի առաջին ազդեցու-
թեանը տակ Մուքաչէնի պարտութեան
աղէտք, արկած անուներ կը տային
այսօր իրենց նօրմալ վիճակը վերս-
տացած կերեւին : Անոնք որ ամեն մի
ճակատամարտի կորստեան մէջ մէկ յան-
ցապարտ կը գտնէին, ինչպէս Լիւս-
եանկի քով Օրլօֆ մը, Սանտէքուի
քով Կրիւքեւսկի մը, չը կրցան ա-
մենէն խոշոր պարտութեան մի պա-
տասխանատու գտնալ, որովհետեւ այդ
կատարեալ խոստովանութիւն մը պի-
տի ըլլար իրենց գլխաւորէն սկսեալ
մինչեւ յետինն ապիկարութեան :
Նոյնպէս լրագիրները դարբեցան ա-
մեն մի նոր փոխուած հրամանա-
տարին գովեստ շայլելէ, ինչ շատը
մի քանի կցկտուր կենսադրական տե-
ղեկութիւններ, մի քանի անհիշատակ
անոնց անցեալ կեանքէն, եւ ամե-
նը այսպիսի : Երկարելու չգար, ո՞վ
գիտէ վաղը այդ փառաբանութեան
որ միշտ ամեն պատերազմ գացող մի
զորավարի համար կը շտայլուէր—
մի փորձանք չը բերէ Ռուսիոյ պա-
տերազմական փառքին :

Եւ արդէն փոփոխութիւնները մեծ
հրամանատարներուն մէջ այդ-
չափ յատցած են որ յերաւի, եւ-
րոպական ռազմագէտները զանոնք
գործի յաջող ելքին շատ աննպաստ
կը նկատեն, իսկ մասնաւորի Լիւսե-
վիչի համար սաշափ ըսուեցաւ թէ
չնորհիւ իւր վայելած համակրան-
քին զօրաց կողմէ ան «Տետտուշ-
քա» մականունին արժանացած է,
եւ թէ զօրքը կըսէ եղբւր, «Ա՜հ Մուք-
աչէնի քով «Տետտուշքան» լինելու էր
տես ինչչի կըլլար ինչչի . . . » : Ե-
թէ ուրիշ զօրավարներու չափ Գու-
րօսթիքին չը հաւանեցաւ, եւ մտուէն
պատճառը այն էր թէ, ան թէպէտ
գէշ ռազմավար բայց միւս կողմէն
նա լոյճամիտ մարդ է եւ իբրեւ կազ-
մակերպիչ մեծ ընդունակութեան տէր,
միւս զօրավարներուն պէս չը վերա-
դարձաւ Բեդերսպուրկ, այլնա Մուք-
աչէնի ամենաանտրկ ճակատամարտ-
ներու ժամանակ ի զուր փնտոց մի
թշնամի գեղալիք—բայց մանր միշտ
փախուստ առած է փնտոցած տե-
ղէն—ուղեց միւս հոն, իբրեւ յետին
ղինուոր, եւ արդէն ինչ երեսով պիտի
երթար Բեդերսպուրկ. ասանկով քա-
ւեց ան իւր մեղքերուն մեծագոյն մա-
սը . . .

Կարժէ որ միւս զօրավարներուն
ալ մեղապարտութեան պարագաները
յատկանշենք հոս : Մինչեւ հիմայ
իսկ Ռուսերը կողքան Լեւո Յանկի
ճակատամարտի կորուստը, որուն
պատճառ Օրլօֆ մը եղած էր, այս
զօրավարը որ իրեն տրուած հրամա-
նէն զուրս շարժումներ ընելով, ճա-
րօնցիներուն դիւրութիւն տուած է
այսպէսով բաժան եղած ռուսական
բանակին մասնակի ջախջախման ո-
րուն հետեւանքն էր անմիջապէս
նահանջի հրաման տրուելը Գուր-
բաթիքին կողմէ ամբողջ բանակին.
իսկ Օրլօֆը պարզապէս վճռուե-
ցաւ Գուրբաթիքին կողմէ եւ գա-
տի տակ՝ այսօր կը գտնուի Բէ-
դերսպուրկ : Զօրավար Կրիւքեւսկի քաջ
ռազմավարի համբաւը կը վայելէր,
Գուրբաթիքին անոր վերջին հրա-
մանը սա պարունակութեամբ եղած
է «Օղնեցէք ինձ որպէս զի թըշ-
նամիին զօրութիւնը հասկնամ» հոս

հարկ կը տեսնամ մի քիչ ռազմա-
կան բացատրութիւն տալ. ամէն
բանակ իւր զօրութեան քանակը,
տեղը եւ այն թշնամիին աչքերէն եւ
հետադարձութիւններէն թաղցնել կը
ջանայ որպէս զի ընդդիմադիր բա-
նակին կարելի եղածին չափ ա-
նակնալ պատրաստէ, եւ ի հար-
կին օգտուի անոնցմէ : Այս մասին
ճարտիչները շատ ճարպիկ գրո-
նուեցան, մինչեւ հիմայ ատենց
զօրութեան մասին ո եւ է գրական
տեղեկութիւն չը կայ. անցեալները
երբ հարցուեցաւ Լօնտօնի ճար-
նական գեապանին թէ Մուքաչէնի
առջեւ թուական առաւելութիւն
ունէին. գիտէք ինչ պատասխանեց—
«Մանչուրիան ասկէ շատ հեռու է,
ստոր համար որոշ չեմ տեսնար թէ
ճարտական բանակը որչափ հոգի
կազմած էր, բայց կրնամ ապահո-
վաբար պատասխանել թէ հոն այն-
չափ զօրք կար որչափ որ հարկ
էր ճակատամարտը վաստելու հա-
մար» . . . զօրավար Կրիւքեւսկի ինչ
ընէր այս պարագային. ճիշդ ինչ-
պէս պիտի ընէր անհատ մը իւր
հակառակորդին ոյժը փորձելու հա-
մար, այսինքն պիտի գրգռէր զայն
եւ կերպով մը բռնելով պիտի
ցնցէր, բայց ասկէ երբեմն կոխ տլ
կեցւայ եւ պէտք է հոն կոտորի, ո-
րուն հետեւանքը շատ անգամ ա-
ղետալի կը գտնայ փորձողին.
ճիշդ այս պատահեցաւ Կրիւքեւ-
սկիին ալ, ան ցնցեց թշնամին
եւ տկար գտաւ, առաջացաւ իւր
իւրաքանչիւրութեանց մէջ որ պէտք
չէր, մինչեւ Սանդէքու : Մարէշալ Օ-
եմաժ շատ պաղարկեւորութեամբ դի-
տեց այս կողմնական շարժումը ի-
րօվիտուս Կրիւքեւսկիին ալ թեւի
հրամանատարն էր : սպասելով թէ
ինչ նպատակով է այս առաջխաղա-
ցումը, տեսաւ որ այս Ռուսերուն
չկատարած յաջող պարագային իսկ
կեղծութիւն եւ ձախէն ո եւ է շար-
ժում մը չը կայ, եւ Ռուսերը
ճարտական ոյժը փորձել ուզած
ժամանակ իրենց տկարութիւնը
յայտնած եղան. իսկ Օեմաժն յա-
ռաջ խաղաց եւ լաւ մը բարեցաւ
Կրիւքեւսկիին : Այս պարագային ինչ
պէտք էր ընէր վերին հրամանա-
տարը. երկու ճամբայ կար կամ
ամբողջ ճակատի երկայնքին յար-
ձակում եւ կամ նահանջել, եւ
Գուրբաթիքին այս վերջին հրամանը
տուաւ [բայց երբ այդպէս չըբաւ
ան . . .] այն ժամանակ ինք
Կրիւքեւսկիին առանց վերին հրամա-
նի ուղեւորեցաւ զէպի Բէդերս-
պուրկ, մեղադրելով Գուրբաթիքի-
նը իբր անվճռական մարդ. հիմայ
այս ալ միւս զօրավարներուն պէս,
ինչպէս Օրլօֆ, Շտեյնէլ եւ ընկերք,
Սըրմալով եւ Թուխտմաքի ծովակալ-
ներուն քով կը հանգստանայ փա-
ռաւորապէս վասն ամենամեծ փա-
ռացն Ռուսիոյ : Բայց անկողմնա-
կալ վերլուծում մը պիտի բաւէր թէ
այս մարտիկները չէին բուն պատ-
ճառը այս ձախողութեանց, այլ
ռուսական յոռի վարչութիւնը :
ամբողջ ընթացք, այսինքն թաքթիքն էր
պատճառը թէ՛ արտաքին եւ թէ՛ ներքին
գեղադրութեանց : Ինչ պիտի ընէր
ռուսական բանակը իրմէ աւելի
կարգապահ եւ հայրենասէր թշնամիին
հանդէպ, ինչպէս նկատել տուաւ
գերմանացի գեղապետ Կէթլքէ, ճա-
րտիչները գոյութեան կոխ կը մը-
ղէին. ատենք տղայ տիոց, օրօրո-
ցէն, դպրոցէն ներշնչուած էին ասել
ռուսերը, որոնք ԶԿ յատերազմի

դափնիները թող տուած չէին ի-
րենց քաղել, եւ որ եղբրական էր,
անոնց յաջողութեանց պատուները
իրենք քաղած էին 96 ի չինական
համաձայնութեամբ, եւ այս վերջի-
նը անգոր պաշտպանելու իրեն ի-
րաւունքները թող տուած էր Ռու-
սերուն տեղաւորութիւն Լիսո-թունի
թերաղջիին մէջ իւր թէ միայն 50:
տարուան համար... Կը բաւէր
ատոնց 5 տարի եւս եւ անա ար-
մատացած պիտի լինէին Ռուսերը
հոն եւ այլ եւս՝ ճարտարական ամե-
նէն խիզախ ձեռնարկութիւնն իսկ
անգոր պիտի լինէր ատոնց ճի-
րաններէն փրկելու մանչուրական
պարարտ պատար։

Ռուսական անյաջողութեանց պատ-
ճառներէ մին ալ, ինչպէս կը յայ-
տարարէ մի Ֆրանսացի ակադեմիկոս
թոմասկից, Ռուսական բանակին մէջ
յայտնի համարձակ կը խօսին եղբր
թէ «այսչափ քաջ եղող ճարտարներ-
րուն բարեկամութիւնը աւելի օգուտ
պիտի բերէր մեր հայրենիքին քան թէ
թշնամութիւնը»։ Ինքնին հասկանալի
է թէ այս գաղափարներով տոգորու-
եալ զինուորը չը պիտի յանդիման
քաջարար նետուի թշնամիին վրայ։
այս ապացուցուեցաւ սուրիններով եւ
ղած յարձակման. ատեն ուր փոքրիկ
ճարտարները կատաղաբար կը բզկտին
հակա ռուսերը։ Իսկ անընդհատ ձա-
խորդութիւնները տեսակ մը լքուած
յառաջ բերած էին ռուս բանակին մէջ։
Այս մէկ

Երկրորդ պատճառը ռուսական դի-
ւանագիտութեան ապիկարութիւնն էր,
սկսեալ պատճառ Ռոյէնէ, Թոքիոյ ռու-
սական դեսպան, մինչեւ Ալէքսիէֆ,
Լամստորֆ, Բուրգարթըն, որ պատե-
րազմէն երկու տարի առաջ իւր
պատերազմական նախարարի հանգա-
մանօք այցելեց Ժոզեֆը, չը կոցաւ
կռահել թէ ճարտար այնչափ պատ-
րաստուած էր ինչպէս Գերմանացիներ-
ը 1870 է առաջ, եւ թէ ան կրնար
յանդիման ռուսական անազնաձաւալ
տէրութեան դէմ ինչամական գիրք
բռնելու... Եւ նոյն իսկ երբ Զի-
մուլայի առջեւ «Վարեակ» եւ «Գո-
րէնց» զրահաւորները առաջին զոհե-

րը կը դառնային պատերազմական
բաթինին, անոնք դեռ Բորթ Ար-
թուրի մէջ անուշ քուն կը քաշէին
եւ երբ Թոքիոյ թորթիւնաւերը յար-
ձակեցան Բորթ Արթուրի վրայ, գը-
տան «Ռէթվիզան» եւ այն զրահա-
ւորներն արտաքին նաւամատոյցին առ
ջեւ. իսկ անոնց հրամանատարները
փառաւոր պարահանդէսի մը մէջ կիսա-
մերկ հիւրիներու բազկաց մէջ կը դառ-
նային հեշտօրօր... Իսկ Ռուսական
հզօր գահուն վրայ սկար Նիքօլան
կը բազմէր որուն շնորհիւ պալա-
տին մէջ երկու զօրաւոր կուսակ-
ցութիւն գոյացած էր, մին պատե-
րազմը շարունակելու խորհուրդ կու-
տար իսկ միւսը խաղաղութիւն կը քա-
րոզէր, եւ Զարը երբեմն այս երեք-
մըն այն հոսանքին ազդեցութեան տակ
կը գործէր, եւ այն է պատճառ որ մի
օր խաղաղութիւնը մօտալուտ ըլլալու
իսկ միւս օր պատերազմի անպայման
շարունակութեան լուրեր կը հասնին
Բեդրսպուրկէն, եւ եթէ այս տատամու-
թիւնը շարունակուի Ռուսիան պիտի
առաջնորդէ կատարեալ անկման, ոյժ
տալով զայն կազմող տարրերու մէջ
արդէն մուտ գտած միջօրայնիւն
բարգաւաճման, որոնց անկախութեան
ձգտումը երկար տարիներէ ի վեր գո-
յութիւն ունի։ Հաջորդութեան եւ ամ-
փոփում, եւ ապագայ պատերազմ-
ներու համար իւրացնել մարշալ Օ-
համայի ռազմաքիտութիւնը, ինչպէս
պիտի ընեն եւրոպական ամեն մի տէ-
րութիւն. եւ Ռուսիան միակ ատով
պիտի փրկուի։

Թ. Հ.

ՎԱՌՆԱՅԵՆ-ՌՈՒՈՋՈՒՔ

(ԳԵՍԵՐԻՆ ՄԷՋ)

Ստեպ ճամբորդելու համար չեն
պակսիր ինձ մերթ դառն եւ մերթ
քաղցր տպաւորութեամբ տօգորուե-
լու առիթներ։ Այս անգամ Վառնա-
յէն-Ռուսիոյ ճամբորդութիւնս լաւ

տպաւորութիւն մը թողուց ինձ եւ
փափագեցայ ներկայիս հաղորդել զայն
«Իրաւունք»ի արգոյ ընթերցողներուն
ալ։
Գնացքին մէջն եմ, խառնապահանջ
լինելն ներելի չէ՝ եւ ո՛չ ալ աթո-
ռակիցներու ընտրութիւնն։ Սեւ
քողերով ծածկուած աղիւս մը եկաւ
քովս նստեցաւ եւ սկսաւ յաջող-
կոտ նայուածքներ սփռել իրմով հե-
տաքթիկներուն վրայ, պահ մը տե-
ղս փոխել ուղեցի ըստ չը յաջողե-
ցայ։

Քոմիտի աթոռին վրայ աւելի տա-
րածուած էր քան թէ ըստ իմ պատ-
կառելի քահանայ մը եօթանասունը
անցած. կռահեց անհանգստութիւնս
եւ ինձ հրամայեց իւր քովը նստիլ, Զեւական
խօսակցութիւններէ վերջ
«Իրաւունք»ի ձեռք թիւր մօտս ըս-
կըսայ կարգաւ «Կարմիր ժամուց» բա-
նափրականը։ Տէր Յուսիկը ինձ շատ
հեռուները տարած էր եւ սկսած էր
մտայնոյ զիտել դէպ անհունութիւնը։

Անցան մի քանի ժամեր քահանա-
յին հետ խօսակցիլ սկսայ, Տէր հայրը
երբ լսեց իմ հայ լիսնին սկսաւ մե-
ղեղել հայ տաղեր եւ եկեղեցական օրհ-
նագիր որպէս, «Որ օրհնես զայնու-
սիկ» «Ողջոյն տուր միմիանց, ի համ-
բոյր սրբութեան», եւնայլ եւն. այն-
քան կենդանի եւ յստակ հայ առո-
գանութեամբ որ ինձ իսկապէս զար-
մանք պատճառեց, եւ զժար եղաւ
ինձ կարծել թէ սա օտարագիր քա-
հանայ է։ Թուրքերէն կը խօսակցե-
ինք, բայց հայերէն կ'եղանակէր.
ինձ անքան հաճելի թուեցաւ այս քա-
հանայի ընկերակցութիւնը որ սկսանք
մտերմանալ եւ մոռնալ գնացի պատ-
ճառած տաղտուկը յամբնթացու-
թեան պատճառաւ։

Տէր Հայրը սկսաւ պատմել իւր
կեանքէն շատ զրուագիւր որոնց մէջ
կը պարզէր Հայոցմէ վայելած բարե-
կամութիւնները, նշանակելի է եղած
երբեմն Վառնայի մէջ Տէր Յովհան
նէս հայ քահանայի մը հետ ունե-
ցած բարեկամութիւնը, որուն առան-
ձին պատարագած առեւը կուգայ եւ
զեր մեր եկեղեցին անոր օգնելու եւ
Տէր Յովհաննէս հայրն ալ փոխար-

դաճարար, այնպէս որ շատ սիրով
իրեն համագրի հոգեւոր եղբայրներ
կապրին եզեր։

Այս քահանային հետ շատ մը հայ-
կական ծէսերու վրայ խօսելէն վերջ
խօսքը եկաւ Ռուսահայ եկեղեցիներ-
ու կալուածներու գրաւման մա-
սին, ի միջի այլոց ըսաւ «Աստու-
ւած մեծ է արդարութիւնը չի խա-
բաներ, ահա Ռուսը իր պատիւը զը-
տաւ թող նայի թէ Աստուծոյ տաճա-
րին կողպուտը ի՞նչ արդիւնք ա-
ռաջ կը բերէ. Եզրպոստի փարա-
ւունը ալ Իսրայէլացիները գերեց բայց
ի վերջոյ զարկաւ եւ լափեց զրէթ-
իսիկը Աստուածը ու իր սիրելի Իս-
րայէլ ժողովուրդը ազատեց բարբա-
րոսաց ձեռքէն։ Թող հայերը չվհա-
տին այլ չըջօրէն գործեն. անշուշտ
հեռի չէ այն արշայոյսը որ պիտի ծա-
գի հայ ազգին. սակայն, ըսաւ, Զեր
ազգէն խաչագործներ եւնա փոխանակ
ազգը հերկայացնելու կը կողպան
ու կը ջլատեն արդէն քիչ պատ-
րաստուած ուժերը։» Առաջին ան-
գամ ըլլալով կը լսեմ այս խօսքեր
օրթոտօք եկեղեցականի մը բերնէն.
ուստի իր ըսածները մեր սիրելի «Իրա-
ւունք» թերթի հաղորդելու համար Տ.
Գոթմանդինէն հաճ ութիւնը ստանալու
պատիւը ընենայ։

ՍԱՀԱԿ

ԱԶԳԱՅԻՆ

Պոլսոյ թերթերուն մէջ ցա-
ւօք սրտի կարգացիք թէ Ման-
գրաւէի հիմնադիր Տ. Կարապետ
Փանոսեան մեռած է 80 ամեայ
հասակին մէջ։ Հանգուցեալին ի-
ւր գրական, կրթական եւ ազգային
գործիչ 50 տարուան զարմունէութե-
թիւնը ամբողջ սերունդ մի իրեն
երախտապարտ կը ձգէ։ Ուստի
մենք խորին շնորհակալութեամբ
զրեմք հոս մեր այդ երէց պաշ-
տօնակցին կորուստը եւ մեր ցա-
ւակցութիւնը կը յայտնենք իր

ԱՐԹՈՒՐ ԱՐԹՈՒՐԵԱՆ

18

ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ

(Շար. Անխորդ թիւէն)

Ե

Պերլին գացող «պատգամաւորներուն» վերադար-
ձին ա՛լ չէր կրցած դիմանալ. Ներսէս Պատրիար-
քին գնաց, «խելքը գլուխը բերել տալու հա-
մար»։ Երբ Հայկական խնդրին հայրը Եւրո-
պայի վրայ լի հաւատքով, խանդավառ կը խօ-
սէր, պահպանողական մարդն ալ սրկաւոր կա-
մաց լի կամաց քաշելով եւ աչքերը՝ ծու-
խին թափառած ելեւէջներուն յառած, հեգնա-
ծալիտ ըսաւ։

—Սրբազան երբ սուլթան Մէճիտին օրովը
Խաթիբ Շէրիֆը կարգաւորեցաւ, Յակոբոս Պատ-
րիարքին Մայր եկեղեցիին մէջ շատ մը բա-
րեմաղթութիւններ ընելէ եւ ժողովրդին մեծա-
մեծ յայտեր տալէ յետոյ, աթոռէն ելաւ ու քիչ
մը ցած բայց խորհրդաւոր ձայնով մը ըսաւ.
«Ի վերայ այս ամենայնի, օրհնեալ ժողովուրդ
թաղաւորինս տաճարէն»։ Որ ունեցի ականջս
լսելոյ լուիցէ։ Թաղաւորինս հիմակ ալ տաճիկ
է, սրբազան, ատիկայ մի՛ մոռնաք, եւ ըստ այ-
նմ ազգը կառավարեցէք։

Ա՛լ անկէ ետքը Պատրիարքարան չգնաց, եւ
ժողովականութեան ո՛ր եւ է պաշտօն չընդունեց։
Զատկի եւ Միտենդի պաշտօնական այցելութիւն-
ները կուտար միայն։ Երբ Ներսէս Պատրիար-
քի ընտելութիւնը Օրթագեղ փոխադրեց, Հայրա-
պետ էֆէնտին քաղաքավարութեան համար «բա-
րով եւ եկեղ» ի այցելութեան գնաց։ Պատրի-
արքը ցաւահար սիրտով կը խօսէր։ Ազգին վի-
ճակը առաջուրէն աւելի ծանրացած էր ու եւ-
րոպան ալ ըսան մը չէր ընել։ Հայրապետ է-
ֆէնտին ուրիշ քանի մը այցելուներու հետ
ինքն ալ մտիկ ըրաւ Պատրիարքին գահագանե-
րը։ Ներկաներէն իւրաքանչիւրը կարծիք մը կը
յայտնէր. ինքը դառնութեամբ այսքան մը յի-
շեցուց։

—Ի վերայ այս ամենայնի, օրհնեալ ժողո-
վուրդ, թագաւորինս... Մնացածը միտքեր-
նիդ բերելու էք, սրբազան։

Թիւրքերուն հետ ազգային ընդհանուր քաղա-
քական ուղղութեան մասին ինչ որ կը գործադ-
րէր, նոյնը եւ կը յանձնարարէր ամէն մէկ հայ ան-
հատի, ամէն հայ հաստատութեան թիւրքերու հետ
առանձին վարմունքի համար ալ։ Կրակ կտրեցաւ
երբ իրիկուն մը «Արեւելք»ի մէջ կարգաց Պոլսոյ
հայ եկեղեցիներէն իւրաքանչիւրին կալուածական
սեփականութիւններուն առանձին առանձին գու-
մարները։ Անմիջապէս գիշերով սպասուորը խփեց
եւ «Արեւելք»ի արտօնատէրը, որ Օրթագեղ կը բնա-
կէր, կանչեց։ «Չորս գու պատուիրեցերը տուաւ։
Մեծ օրագրին տէրը զարմացած կը մնար թէ ատանկ

հրատարակութենէ մը ազգին ինչ վնաս կրնար
ըլլալ։

—Պէ՛ւ այ օղուր, չունեիր հոտ առնելու չեն,
ըսաւ հին պահպանողականը։ Տաճիկները գիտնա-
լու չեն թէ մենք ինչ ունինք, ինչ չունինք։
Աչք կը տնկեն. չեն քաշեր։ Մենք կեալուր ենք
հասկցա՞ր, աղէկ բանը իրենց կը վայլէ։ Մեր
կնիկներուն երեսները ծածկելու ենք Անաստի մէջ
չէ նէ կանեն կը տանին. մեր տունները աչքէ
հեռու պահելու ենք. չէ նէ կը քանդեն. վրա-
նիս գլուխինս աղքատ երեւնալու է, չէ նէ կը
կողոպտեն։ Մենք մինչեւ հիմա ատանկով ապ-
րեւ ենք. ու պէտք է որ համբերե՞նք, մինչեւ
որ շան-սատակը վերնայ։ Հիմակ տաճիկներն ատ-
ձեր գրածները կարդալու ըլլան նէ ի՞նչ պիտի ը-
սեն։ Մենք անոնց միշտ մեր աղքատ ժամն-
րուն վրայ կը խօսինք, դուք ելե՛ր հարստու-
թիւն ցոյց կուտաք։ Զաւակս, ըսաւ վերջա-
ցնելով, ձեր մէջ խելքը գլուխը, փորձառու մէ-
կը չկա՞յ որ այս բաները գիտնայ։ «Մենք չե-
ղած տեղը, կերթան մենք կարասին խորհուրդ կը
հարցնեն» կըսեն։ Մէջերնիդ սանկ փորձառու մէ-
կը առէք, հին խափա ըսուածներէն։ Հին գիրնի-
ն պէս անոնք ալ մխապուր են։

(Շարունակելի)

ազգականներուն ու մերձակա-
ներուն :

—Տեղւոյս թաղ. խորհուրդը
սկսած է եկեղեցւոյ շրջապատին
կարգադրութիւնը, և պիտի ընէ
այն ինչ որ կը թոյլատրէ քա-
ղաքապետութիւնը :

—Արժ. Տէր Վահրամ հօր քա-
րոզներէն և յորդորներէն ազ-
դուած բարեպաշտ տիկիներ
հանգանակութեան ձեռնարկած
են տեղւոյս եկեղեցիին տախ-
տակամածը կապերուն երով ծած-
կելու և ինչ ինչ պակասներ
լրացնելու համար :

—Հինգշաբթի իրիկուն տեղի
ունեցաւ Գողթան երաժշտական
խումբին կողմէ ծանուցուած ե-
րեկոյթը ի նպաստ տեղւոյս Ազգ-
վարժարանին տղքատիկ սանե-
րուն և սանուհիներուն : Սրահը
բոլորովին լեցուած էր կոկիկ
գուժար մը գոյացած ըլլալ կը
թուի :

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐԻՍԱ

Մաքէթոնիատա Բուժ չէթա
լարն հաշարթընտան տօլայը
Ուտորիա վէ Բուսիա էլիէրի
Պապը Ալիէ պիր նօթա վիրուպ
անլէրէ գարշը մուէսիր թէտ-
պիրլէր իթթիսազ օլընմասընը
վէ մալիյէ իչիւն տախի կէօս-
թէրիլէնձէտվէլէ րէայէթ օլըն-
մասընը իտտաա իթտիլէր :

—Պրանսա էլիսինին թալէպ-
լէրի մուճիպ պաղը իմթիաղաթ
վէրիլմէսինի Սուլթան իրատէ
իթմիշ օլտըղընը պուստան էվ-
վէլէրի նուսիսէմիգտէ եաղմընը
ըտըղ . սօն տէֆա «թան» ա իս-
պար օլընտըղը իւզրէ, մէգքիւր
իրատէ եալընըղ հէյէթի վիւ-
քէլանըն գարարլարընը քիֆա-
յէթսիղ սուրէթտէ թաստիգ իթ-
միշ օլտըղընտան, պիր թաղըմ
թէֆէրրուաթ իչիւն ֆրանսըղ
էլիսի թէքրար Պապը Ալի իլէ
մուխապէրաթա կիրիլմէկէ մէճ-
պուր օլմուշ տըր :

—Մաքէթոնիատա պուլկար
չէթալարը թիւրք ասքէրլէրի ի-
լէ ուղրաշմագտա օլուպ, Բուժլար
թիւրքլէրէ եարտըմ իթմէքտէ
տիրլէր :

—Աւստրիանըն միւլքիլէ աճէն-
թի կիրթմէկէ հաղըրլանմըն օլա-
րազ, եաղընտա էվրոքա գօնթ-
րօլը թէէսիս օլընաճաղընը պէ-
յան իթմիշ տիր :

—Մաքէթոնիանըն 3 վիւա-
յէթլէրինտէ ալթը պէօյիւք
տէվլէթլէրտէն մալիյէ գօնթրօ-
րը թէէսիս օլընմասընա վիէն-
նա վէ Բէթէրպուրկ գապիւնէ-
լէրի շաղի օլմուշլար :



Մ Ո Ւ Հ Ա Ր Ե Պ Ե

Շու կիւնլէրտէ ամիրալ Բօժ-
տէսթվէնսքիւնիտօնանմասը Մա-
լաքա պօղաղընտան կէյմիշ օ-
լուպ, Բանանկ աչըղլարընտա
պուլընըյօր : Բուս տօնանմասընը
գարշըլուազ իչիւն եօլա չըգմըն
օլան ամիրալ թօկօնըն տօնանմա-
սը էլան մէյտանա չըգմամըն
տըր :

Բուս վարօրլարըն մըգտարը վէ
սիւհալարը ճարօն տօնանմասըն-
տան տահա զիյատէ թահմին օ-
լընըյօր իսէտէ, քէօմիւր վէ մէէ-
քիւլաթ թէտարիքիւն եալընըղ
նաղլիյէ վարօրլարընտան պէք
լէմէքտէ օլտըղլարընտան թէհ
լիքէտէ պուլընտըղլարընաչիքեար
տըր : Թահմինէ կէօրէ Բուս տօ-
նանմասը ֆրանսըղ միւլթմէվէ-
գաթընտան Գօչինչինին Սալիօն
իսքէլսինէ կիրթմէք վէ օրա-
տան քէօմիւր վէ մէէքիւլաթ ալ-
մաղլէ պէրապէր պաղը վարօր-
լարը թամիր իթտիլէնէք իմիշ .
պու հարէքէթ Ֆրանսանըն պի
թարաֆլըղընա մուղայիր օլա-
ճաղընտան մատաա, ամիրալ թօ-
կօ Բուսլարըն օլ նօթայա գա-
տար կիրթմէսինէ միւսատէ վէրէ-
ճէկի շիւքէլի տիր : Նիհայէթ
սաաթ պէ սաաթ չէտիրտ պիր
միւսատէմէ պէքլէնիլիյօր :

Տէօրթ առէտ ճարօն վարօր-
լարըն Սալիօնա եաղըն կէօրիւ-
տիկի էվլէլէքի կիւն պիրտիրիլ-
միշ իտի : Սէղքիւր սուլարտա
վէ Սինկաբուր ճիւղարընտա ին-
կիրթէրա վէ Հօլանտա տօնան-
մալարը տախի կէզինմէքտէ
տիրլէր : Շու հալտէ պի թարաֆ-
լըգ գալտէսի խիւաֆընա օլա-
րազ Ֆրանսըղլար Բուսլարը
Սալիօն իլիմանընա գապուլ իթ-
մէլէրինտէ, ինկիրիլ տօնանմա-
սընըն թուլթաճաղը թարիգ րէք
ճալիպի տըղգաթ օլաճազ տըր :

Բ Ո Ւ Ս Ո Ւ Ա

—Շայէաթա կէօրէ, Ջատիկ-
տէն էվլէլ Ջար միւլքիլէ վէ
ասքէրիյէ րէճալը քէրամը պիր
ֆէվգէլատէ մէճլիսէ տալէթ ի-
տէրէք վէ սուհ մէսէլէսի իչիւն
պիւ միւղաքէրէ գարարը գա-
թիի վէրէճէք իմիշ :

Քէլա «Ջէմսքի Սօպօր» նամ
մէճլիսի թէճէմմիւ իթմէքլէ
մաթպուլաթըն սէրպէստիյէթիւնի
վէ միւսալաթը շախիլէյէ էմր
ու իլան էլիյէճէկի միւլքէվլի
տիր :

—Ենի ասքէրլէրին թօրլա-
նըմասը իչիւն գարարիւր օլան
իւքաղը Ջար իմգալամամըն տըր-
զիրա հհալինին իսթիլալընտան
գօրգուլիյօր :

Պու ճիւլէլէ իլէ պէրապէր րէ-
ճալը տէվլէթ վէ վիւքէլանըն
էքսէրիսի մուհարէպէնին տէվա-

մընա թարաֆտար օլտըղը պիւ-
տիրիլիյօր :

—Աճանա Բէյթրր, Թօքիօ
տան պիրտիրիլիկիւն պինաէն,
Մանչուրիա օրտուսընը եէնիտէն
թանգիւմ իթմէք իչիւն Բուսլա-
րըն րլանընը սէմէրէսիլ պը-
րազմազ մագսէտի իլէ ճարօն
գուլվէի ասքէրիյէսինի 2-3 գաթ
արթըրմազ իչիւն թէտպիրլէր
իթթիսազ իթմէքտէ տիր : Կէ-
լէճէք կիւղէ գատար ճարօն պիր
միլիսն ասքէր հաղըրլամազ ա-
մէլինտէ իմիշ . ճարօնլըլար Խար
պինի զապթ իթմէքլէ անը օր-
տուկեան իթթիսազ իտէրէք, ալ-
նը վաղըթտա շարգտան տախի
Բուսլարա գարշը մուհարէպէյէ
տէվալ իտէպիլէնէքլէրինէ գա-
նի օլմուշ տըրլա :

—Ամսթէրտամտա ալընան հա-
վատիսէ պինաէն, րուս վէ ճա-
րօն տօնանմալարը վուրուշմուշ-
լար Անամպա առալարընա եա-
ղըն : Թէֆէրրուաթ եօգ տըր :

Կ Ի Ր Ի Տ


Կիրիտտէ ըսեան տէվալ իթ-
մէքտէ : Ատանըն համիլէրիատտ
օլընան տէօրթ տէվլէթլէրին
պահրիէ ասքէրլէրի Կիրիտ հիւ-
քիւմէթի հաղըրէսինին ժան-
տարմալարը իլէ պէրապէր ասը-
լարը թաաղիպ իթմէկէ ուղրա-
շիյօրլար : Էհալի պաղը չէհի-
լէրտէ հիւքիւմէթ պինալարընը
իչլալ իտուպ եսնան պանտէ-
րասընը տիքմիշ տիր : «Թիւ-
նօ» ինկիրիլ վաթօրը ասըլար-
տան 12 քիչի թուլթուպ Գանեա-
յա կէթիլմէսինտէ, Էհալի ան
լէրի գուրթարմազ իսթէտի,
ֆազաթ իթալիալը զապիթին
էմրի իւզէրինէ ասքէրէր ա
թէշ իտէրէք Էհալի տաղըթտը-
լար :

Մ Ի Ի Թ Է Ն Է Վ Ի Է

Ֆէլա Բրէնս Ֆէրտիլանտ հաղ-
րէթլէրի Բօմայա կիրթմիշ օլուպ
գրալտան գապուլ օլընտը, վէ
Պրիսթօլ օթէլինէ Էնմիշ օլարազ
պիւլալէրէ գրալըն իատէի վիզի-
թասընը գապուլ իթտի, վէ խա-
րիճիէ նաղըրը Մ . Թիթօնի իլէ
ուզուսն պիր միւլազաթտա պու-
լընտը :

—Լահօուտան ալընան թէլէկը-
րաֆ իւզրէ, զէրդէլէտէն թէլէֆ
օլանլարըն մըգտարը Բալամուր-
տա 3000 վէ Գանկրա գաղասըն-
տա 10000 քիչի տիր : Սիլմատա
թէքրար զէրդէլէ վուգու պուլ-
մուշէհալի տէհչէթտէ :

—Աճէմիտանտա գուլվէի աս-
քէրիյէի եէնիտէն թանղիւմ իթ-
մէք իչիւն Շահ պիր ֆէրման
նէշի իթտիրմիշ տիր :



ՏԻՔԻԾ ՍԱՔԻՆԱԼԱՐ

Ա.Լ.Ե.Ս. Վէ ՈւճՈՒՋ

Գատընլարա, գօնտուրաճըլարա վէ
թէրդլէրէ մախսուս էնվալ տիքիշ
մաքինալարը վառնա վէ Բօվապիա մա-
նիֆաթուրա մաղազալարըմըղտա մէվ-
ճուտ օլուպ, ֆրանճա պաշգալարըն-
տան 100 տէ 30 նօգսան սաթմագտա
օլտըղըմըղ կիպի, միւլթլէրիլէրէ սու-
հուլէթ օլմազ իչիւն հաթիստա 2-3
ֆրանգ էտուլմէք շարթը իլէ վէրէսիյէ
տախի վէրմէքտէլիլ :

Սաթտըղըմըղ մաքինալար գաղալն
սապաթլանըլար իսէ մայէթիմիգտէ
պուլընան մահր մաքինիսթ Մ . Սոմ-
հանէս Շիրինեան կիտուպ մէճմանէն
թամիր իտէր վէ աճէմիլէրէ էօյրէտիր
Կէզա էսկի մաքինալար սաթըն ա-
լըր վէ թլամքա իտէրիլ :

Վէրմէքտէ օլտըղըմըղ շու սուհու-
լէթլէրտէն պիւ իսթիֆատէ ալեա վէ
ուճուզ պիրէր մաքինա սահրպի օլ-
մազ արգու իտէլէրի էք հէր ճիւլթ
իօշնուս պըրազաճաղըմըղը վատ էյ-
լէրիլ :

ՄԻՔԱՅԷԼ Ս. ԳԱՊԱՏԱԹԵԱՆ
(Ձիւլէք օլուպ)
Պալրաճըլար Ն. 233

Ա Ջ Գ

Տեղւոյս Հաղալան Էնթիքարանի
խնամակալութիւնը, պատու ունի ծա-
նուցանել յարգոյ հասարակութեան թէ
յառաջիկայ Ապրիլ մէկէն սկսեալ, ձը-
րիապէս պիտի աւանդուին հայերէն,
(իւր ամէն ճիւղերով) թուարանութիւն
և ազգային պատմութիւն :

Ուստի կը խնդրուի ամէն անոնցմէ
որոնք կը փափաքեն սոյն գասախօ-
սութեանց հետեւիլ, հաճին ներկայա-
նալ ընթերցարանիս խնամակալու-
թեանը :

Դասախօսութեան ժամանակները պի-
տի ըլլան, ամէն երեքշաբթի և ուր-
բաթ օրերը : Գիշերուան ժամը 8 էն
մինչեւ 9 ու կէս :

Խնամակալութիւն
(Կնիթ)

28 Մարտ 1905
Պուրկաղ

ԿԸ ՓՆՏՈՒԻ

Քաղաքիս մէջ հայ վաճառատան
մը համար 13-14 տարեկան աշա-
կերտ մը կը փնտռուի : Եթէ շա-
կերտին բարքը ու վարքը վառահու-
թիւն ներշնչէ, վաճառականը մատաղիք
է գանի գիշերները իր տանը մէջ
պահել ու կերակրել :

Դիմել խմբագրութեանս

Одговорникъ А. Курбетянъ